

---

---

**ՆՈՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԱՆՅԱՆ**  
(ծննդյան 70-ամյակի առթիվ)



Լրացավ պատմաբան և հրապարակախոս Նորայր Բագրատի Սարուխանյանի ծննդյան 70-ամյակը: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նորայր Սարուխանյանը ծնվել է 1935 թ. մայիսի 1-ին՝ Սյունիքի մարզի Տեղ գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1953 թ. ընդունվել և 1958 թ. ավարտել է Երևանի պետական համալ-սարանի պատմության ֆակուլտետը: 1958-1962 թթ. աշխատել է հանրապետության կոմերիտական մարմիններում, այնուհետև ՀՄԽՆ նախարարների խորհրդին առընթեր հեռուստառադիոպետկոմի ռադիոհաղորդումների պրոպագանդայի խմբագրությունում իբրև ավագ խմբագիր: Ն. Սարուխանյանը 1963 թ. ընդունվել է

ՀՄԽՆ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո՝ մինչև 1970 թ., աշխատել է նույն ինստիտուտում սկզբում որպես կրտսեր, այնուհետև՝ ավագ գիտաշխատող: Այդ տարիներին նա հրատարակում է պատմագրության վերաբերյալ բազմաթիվ գիտական հոդվածներ: Գիտական հասարակայնության ուշադրությանն է արժանանում հատկապես «Պատմագիտության մեջ Ներսես Աշտարակեցու գործու-նեության գնահատման հարցի շուրջը» հոդվածը, որը խորհրդահայ պատմա-գիտության մեջ XIX դ. առաջին երեսնամյակի հայ ազատագրական շարժման նշանավոր գործչի վերաբերյալ առաջին գիտական հրապարակումն էր:

1968 թ. Ն. Սարուխանյանը պաշտպանում է «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, որը, որպես մենագրություն, նրա գիտական ղեկավար ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանի խմբագրությամբ լույս է ընծայվում 1971 թ.: 1970-1986 թթ. Ն. Սարուխանյանն աշխատում է իբրև Հայաստանի կոմկուսի և կառավարության պաշտոնաթերթի՝ «Խորհրդային Հայաստանի» խմբագրի տեղակալ: Նա շուրջ 17 տարի մեծ ջանքեր է գործադրել հանրապետության առաջատար թերթի ազգային ուղղվածությունն ապահովելու ասպարեզում, «Ժուռնալիստիկայի բնագավառում կատարած բազմամյա ակտիվ աշխատանքի համար և ծննդյան 50-ամյակի կապակցությամբ» Ն. Սարուխանյանը պարգևատրվել է հանրապետության Գերագույն խորհրդի պատվոգրով: Այսօր էլ իրենց արդիականությունը չեն կորցրել «Խորհրդային Հայաստան» թերթում տասնամյակներ առաջ նրա հրատարակած «Ցեղասպանության կեղծարարները պատմության դատաստանի առաջ», «Հեղափոխական Ռուսաստանը և հայ հասարակական միտքը», «ԱՄՆ-ի «չեզոքությունը» Մեծ Հայրենականի նախօրյակին» և այլ հոդվածներ:

1986-1991 թթ. Ն. Սարուխանյանը վարել է «Հայգիրք» հանրապետական միավորման գլխավոր տնօրենի պաշտոնը: Ն. Սարուխանյանը

1991-1994 թթ. աշխատել է իբրև ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի գիտական քարտուղար, իսկ 1994 թ. մինչև օրս աշխատում է պատմության ինստիտուտում (սկզբում՝ իբրև ավագ, այնուհետև՝ առաջատար գիտաշխատող):

1980-ական թվականների սկզբներին լույս տեսան նրա «Ստ. Շահումյանի պատմագիտական հայացքները» և «Միոնիզմի իսկական դեմքը» գրքույկները: Վերջինս, որը խորհրդային ժամանակաշրջանում սիոնիզմին նվիրված առաջին հայերեն հրատարակությունն էր, Ն. Սարուխանյանը ցույց է տվել, որ համաշխարհային իմպերիալիզմի հետ սերտաձած հրեական խոշոր բուր-ժուազայի գաղափարախոսությունն ու նրա ճյուղավորված կազմակերպությունների համակարգ է, քաղաքական պրակտիկայի մարտավարական և ռազմա-վարական համապարփակ ծրագիր:

1997 թ. լույս է տեսնում Ն. Սարուխանյանի «Հայկական հարցը մինչ-խորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ» աշխատությունը, որը հաջորդ տարում պաշտպանվեց որպես դոկտորականատենախոսություն: Նույն թվականին հրատարակվեց նրա «Լեոն և Հայկական հարցը» գրքույկը: Ն. Սարուխանյան պատմաբանի և հրապարակախոսի նախասիրություններում առաջնային բնագծում են պատմագրությունն ու քաղաքական հայագիտությունը: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման և Հայկական հարցի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում Ն. Սարուխանյանն անդրադարձել է նշանավոր բոլոր հեղինակներին, լինեն դրանք պատմաբաններ, գրողներ, հայտնի հասարակական-քաղաքական թե երևելի կրոնական գործիչներ, և վերլուծելով նրանց հայեցակետերը՝ տվել է ուշագրավ, կուսակցական գաղափարականացումից վեր կանգնած, ժողովրդի համազգային խնդիրներից բխող և քաղաքական հայագիտության ու պատմագիտության առաջընթացի խնդիրներին ընդառաջող ձևակերպումներ, որոնք հայ պատմագիտության անանց արժեքներ են:

Լինելով XX դ. վերջին երեսնամյակի պատմական անցքերի և իրադարձությունների ժամանակակիցը՝ Ն. Սարուխանյանին ցավ են պատճառում հատկապես վերջին տարիներին պատմական անցյալի ու ազգային արժեքների նենգափոխման ընդգծված միտումները, այն տխուր իրողությունը, որ կեղծվում են պատմական իրադարձությունները, արհամարվում են պատմության ուսանելի դասերը: Սկզբունքորեն և անզիջում դիրքերից գրված հոդվածներով Ն. Սարուխանյանը բարձր է պահում գիտության և հրապարակախոսության պատիվը:

Ուզում ենք կարևորել նաև Ն. Սարուխանյան մտավորականի բարոյական բարձր նկարագիրը, հատկություն, որը նրան ուղեկցել է ամբողջ գործունեության ընթացքում: Լավն ու գեղեցիկը միշտ սատարող մեր ընկերոջը ցանկանում ենք առողջություն և տևական աշխատունակություն:

**ՍԵՓԱՆՅԱՆ Ս. Ս.**

Պատմագիտության դոկտոր